

ՇՆՈՐԷԱԽՈՐՈՒԹԵՐՆԵՐ

Ս. Արոռոյս Հոգեւոր Պետին, Ամեն. Սրբազան Պատրիարք Հօր եւ բովանդակ Պատ. Միաբանութեան, Գերաւնորհ Ս. Արքեպիսկոպոսաց եւ Հոգեւնորհ Վարդապետաց կողմէ ՍԻՈՆ շնորհաւորական զգացմանց շեմ ողջոյններ կ'ուղղէ իր բոլոր յարգելի աշխատակիցներուն, բաժանորդներուն եւ համակիրներուն, եւ ազգին լուսեան, ներկայ 1938 տարւոյ Ամանորի եւ մերձակայ Ս. Ծննդեան եւ Աստուածայայտնութեան տօնին առթիւ:

Ամենուս արագին խղիւղեմն է որ սկսող տարւոյն առաւօտը բարութեան եւ խաղաղութեան արշալոյսը ծագած ըլլայ աշխարհի եւ բովանդակ մարդկութեան բախտին վրայ, եւ ազգովին մխիթարութեան եւ եղբայրսիրութեան նոր կեանք մը բերէ մեր սիրելի ժողովուրդին եւ իր Ս. Եկեղեցւոյն համար:

Այս առթիւ Ս. Պատրիարք Հայրը կը փափաքի իր զգածուած արտիւ շնորհակալիքը ներկայացնել բոլոր այն բազմաթիւ պատուական ազգայնոց եւ օտարաց, որոնք մինչեւ ցարդ, հեռագրաւ, նամակաւ եւ որ եւ ուրիշ միջոցներով ցաւակցութիւն եւ բարեմաղքանքի արտայայտութիւններ կատարեցին իր անձին վերաբերմամբ, եւ ամենուն համար կը մաղթեալ առողջ եւ անփորձ կեանք:

Շնորհակալութեամբ կը ծանուցանենք քե վասն բարգաւաճման ՍԻՈՆ-ի նուիրած են.

Տիար Մանուկ Գայրգնեան՝ Սանդիակոյէն, Տօլար 3.50:

» Զարմայր Երեցեան՝ Երուսաղէմէն, Պղտ. Դնկ. 50:

ՍԻՈՆ ՆՈՒԻՐՈՂՆԵՐ 1938Ի ՀԱՄԱՐ

Երուսաղէմէն՝

Ս. Արոռոյս Լուսարարապետ Գեր. Տ. Մեսրոպ Ս. Արքեպ. Նշանեան, Արժ. Տ. Կորիւն Քհնյ. Շահինեանին՝ Կ. Պոլիս:

Հոգ. Տ. Մուշեղ Վրդ. Հայրապետեան, Բարեչնորհ Արմենակ Սրկ. Ոսկերիչեանին՝ Երուսաղէմ. — Տիար Արշաւիր Փուլյումճեանին՝ Գահիրէ:

Հոգ. Տ. Վահան Վրդ. Գէորգեան, Երուսաղէմացի Հայոց Բարեսիր. Միութեան. — Արժ. Տ. Յակոբ Քհնյ. Քէլէմեանին՝ Հաճի-Հապիւլլի. — Տիար Թորոշ Փուշեանին՝ Պրազիլիա. — Տիար Ալէքսան Բաշայեանին՝ Դամասկոս:

Հոգ. Տ. Տիրան Վրդ. Ներսոյեան, Տիար Գէորգ Ներսոյեանին՝ Հալէպ:

Բարեչնորհ Խաչիկ Սրկ. Մանուէլեան, Տիար Մանուէլ Համալեանին՝ Հալէպ:

Բարեչ. Կարապետ Սրկ. Սիրունեան, Տիար Սարգիս Շիրինեանին՝ Շիքակօ:

Հոգ. Տ. Հայկազուն Վրդ. Արրահամեան՝ Յոպպէէն, Տիար Հայկ Յովհաննէսեանին՝ Հէլուան:

Տիար Տիրան Տարազեան՝ Յոպպէէն, Արժ. Տ. Գրիգոր Քհնյ. Յովհաննէսեանին՝ Իսմայիլ:

Օր. Արաքսի Թապլեան՝ Թրոյէն (Ն.Ե.), Հայոց Ս. Պետրոս Եկեղեցւոյ Մատենադարանին՝ Թրոյ:

Տիար Հայկ Թումայեան՝ W. Wedfordէն, Արժ. Տ. Յարութիւն Ա. Քհնյ. Թումայեանին՝ W. Wedford:

E. Watertownի Հայ Մայրերու անդերէն դասարանի անդամներին, E. Watertownի Public Libraryին:

Տիար Հայրապետ Պարոնեան՝ Մաթայէն (Եգիպտոս), Արժ. Տ. Յարութիւն Քհնյ. Յովսէփեանին՝ Կալաց:

ՄԱՄՐԼԹԵՅՆԻ ՀԻԻԾԱԽՏԱԻՈՐՈՅ ԲՈՒԺԱՐԱՆԻ ԽՆԱՄԱԿԱԼԱԻԹԵԱՆ

ՇՆՈՐՀԱՌՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ԲԱՐԻ ԿԱԶԱՆԴ

ՄԵՆԵԱՅԱՐԳ ՏԻԱՐԲ

Ամէնուն յայտնի է, թէ Լիբանանի Մամրլթէյն գիւղի մէջ 14 տարիներէ ի վեր հոգեւոր պետերու նախածեւնութեամբ գոյութիւն ունի Հայ հիւժախտաւորաց Ազգ. Բուժարան մը, ուր պատասպարուած է ցարդ 865 հոգի՝ մեր հիւանդ եղբայրներէն եւ բոյրերէն:

Բուժարանը առանց հաստատուն եկամուտ մը ունի՝ ալու, իր գոյութիւնը պահած է բարեսէր ազգայիններու սրտաբուղիս նուէրներով՝ հանգանակութեամբ, զանձանակներու հասոյթով եւ պատահական նպաստներով, հաստատուն եկամուտ ըլլալով ունինք միայն Հ. Բ. Ը. Միութեան նպաստը որ է ամսական 8.50 Անգլ. ոսկի:

Սակայն. Մամրլթէյնի Բուժարանի օգն ու կլիման թորախտի դարմանումին տեսակէտէն աննպաստ ըլլալով՝ խնամակալութիւնս սկիզբէն ի վեր մտադրած էր Լիբանանի բարձունքներուն վրայ կանգնել նոր բուժարան մը իր նպատակին ծառայելու համար, եւ այս ուղղութեամբ արտասահմանի եւ սեղաչի մեր ունեւոր բարեսէրներուն մօտ դիմումներ կատարեց:

Ուրախութեամբ կուգանք յայտնել թէ եղած դիմումները ապարդիւն չանցան, խնամակալութեան ձեռնարկած գործին անհրաժեշտութիւնը, կարեւորութիւնը եւ ստիպողականութիւնը նկատի ունենալով, մեր սիրելի ազգայինները պատրաստակամօրէն ընդառաջեցին մեզի, եւ կարճ ժամանակի մը ընթացքին զգալի գումար մը կարելի եղաւ հանգանակել՝ թէ նոր բուժարանի շինութեան համար եւ թէ՛ ներկայ բուժարանի աւօրեայ ծախսերուն համար:

Ի մասնաւորի գտնուեցան անհատներ որոնք համայնքի, քաղաքի, իրենց կամ գերդաստանի անունով յարկարաժիններ եւ սենեակներ որդեգրեցին վճարելով շինութեան ծախսերը, որդեգրուած սենեակի կամ յարկարաժինի ճակատը պիտի գրուի որդեգրողներու անունները: Իւրաքանչիւր սենեակի շինութեան ծախս յատկացուած է 40 Անգլ. ոսկի:

Շինութեան գործը փութով եւ եռանդով յառաջ կը տարուի եւ Տիրոջ կամքով գարնան սկիզբները բուժարանը Մամրլթէյնէն հոն պիտի փոխադրենք: Շէնքը 3 յարկանի պիտի ըլլայ, ներկայիս 3րդ յարկին կառուցումը լիմնալու վրայ է: Վաթսունէ աւելի սենեակներ ունի, առաջմ 64 անկողին պիտի ունենանք օժտուած յարկարաժիններով, պիտի ամբողջացուի արդի գիտութեան պահանջած բոլոր բժշկական եւ առողջապահական պայմաններով, վստահ ենք թէ Լիբանանի մէջ գոյութիւն ունեցող պետական բուժարաններէն պակաս պիտի չլինայ: Ուրախութեամբ կուգանք յայտնել թէ նոր շէնքը այցելող Հայ եւ օտար հիւրեր շատ գոհ մնացած են բուժարանի դիրքէն, կառուցուածքէն եւ մանաւանդ օդէն ու շրջակայքէն:

Սիրելի Հայրենակիցներ,

Շինութեան յատկացուած 2.500 Օսմ. հնչ. ոսկիէն մաս մը կը պակսի մեր քով, ուստի եւ յատկապէս պիտի խնդրենք Ձեր սիրելութենէ որ հաճիր ձեր վարչութեան, Ս. Եկեղեցւոյդ համայնքիդ, քաղաքիդ եւ կամ գերդաստանիդ անունով յարկարաժին մը, դուռ մը, պատուհան, կահկարասի, բժշկական գործիք մը եւայլն, որդեգրելիք մեր ծանր բեռը մասամբ թեթեւցնելու եւ Ձեր թորախտաւոր եղբայրներուն ու բոյրերուն բարի Սամարացիին պէս ցաւոտ թորքերուն ձեթ ու իւղ թափելու բարի գործով, որոնք՝ հալած ու մաշած, փոսացած աչքերով ակնդէտ այդ շէնքի լրանալուն կ'սպասեն, հոն փոխադրուելու Աստուծոյ արեւին տակ քիչ մը աւելի երկար ապրելու կամ բժշկուելու յոյսով:

Ուրեմն տարեկան նուէրիդ վրայ փոքրիկ բան մըն ալ աւելցուր յատկապէս հանգստաւէտ նոր կառուցուող հիւանդանոցի գործին ու վարձատրութիւնդ անպակաս ստացիր ԱՆԻԷ, որ պիտի ըսէ վերջին օրը «ՀԻԻԱՆԻ ԷՒ, ՈՒ ԻՆԾԻ ՏԵՍ ԵԿԱՔ»:

Յիշէ՛ Յիսուսի խօսքը. «Աւելի երանելի է տալը քան թէ առնելը»:

Մնամք սիրոյ ողջունիւ եւ Ազօթաբար

Խնամակալութիւն Հայ Հիւժախտաւորներու Բուժարանի

Երէց

Նախագահ

(ՎԵՐ.) Ե. Յ. ՀԱՏԻՏԵԱՆ

ԵՂԻՇԷ ԱՐՔ. ԿԱՐՕԵԱՆ

(Կնիք)

Բ Ա Յ Ն Ե Գ Ի Ն

ՍԻՈՆԻ Տարեկան բաժնեգրինն է բոլոր երկիրներու համար՝ Անգլ. Շիլին 6:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԿԱՆԽԻԿ Է

Հասցէ՝ *Rédaction de la Revue Arménienne SION*

Patriarcat Arménien, Jérusalem - Palestine

Հ Ա Յ Մ Շ Ս Կ Ո Յ Թ Ի Ա Մ Ի Ս

Սիրելի Հայրենակիցներ,

Ինչպէս ամէն տարի, հաւատարիմ մնալով գեղեցիկ աւանդութեան մը զոր Ոսկեղէն Կիրակիով նուիրագործեց Հ. Բ. Ը. Միութեան յաւէտ ողորցեալ Հիմնադիր-Նախագահը, մեր Միութիւնը այս տարի եւս ամէն տեղ պիտի կատարէ Հայ Մշակոյթի նուիրահաւարութիւնը, յօգուտ Միութեան 142 նպաստընկալ վարժարաններուն, որոնց մէջ աւելի քան 16000 երկսեռ որբեր եւ ուսանողներ տոհմային դաստիարակութիւն կը ստանան:

Հ. Բ. Ը. Միութեան երբեակ Շրջանակներու Կեդր. Ցանձնաժողովները, տեղական Մասնաճիւղները, ինչպէս նաեւ Որդախնամ եւ Կրթական Մարմինները, Տիկնանց Օժանդակները եւ Կրտսերաց Լիկաները, սպարտաճանաչութեան եւ համագործակցութեան ոգիով մը, իրենց շրջանին մէջ ըստ յարմարութեան յառաջիկայ Դեկտեմբեր, Յունվար եւ Փետրվար ամիսներէն մին պիտի հուշակեն «Հայ Մշակոյթի Ամիս», եւ նուիրահաւաք շրջիկ խումբեր կազմելով, ինչպէս նաեւ մասնաւոր հանդէսներ սարքելով, «Հայ Լեզուի, Հայ Դպրոցի եւ Հայ Մշակոյթի» անունով կրթական կամաւոր տուրք մը պիտի հանգանակեն, անձնական դիմումներով, ամէն ազգասէր Հայու միտքին եւ խիղճին կոչ ուղղելով:

Այդ տարեկան նուիրահաւարութեան արդիւնքովն է զխաւորաբար որ մեր Միութիւնը ի վիճակի պիտի ըլլայ, համաձայն իր Կրթական Ծրագրին, շարունակելու ազգասպասանումի կենսական գործը որ զազոութեամբ մշակոյթն է:

Արգարեւ, Միութեանս ազգային վարժարաններու եւ հայերէնի Դասարաններու, երիտասարդական Ակումբներու եւ Հարսաններու գերազանցօրէն համազգային ձեռնարկները կը կարօտին տարեկան առնուազն 7000 Անգլ. ոսկիի ծախքի մը, որ ապահովուած չէ կտակային հիմնադրամներով:

Ուստի տարակոյս չունինք թէ ամէն ստացաւ Հայ պիտի չի զլանայ իր լուծման այս կենսական նպատակին համար, որուն հետապնդումը կախում ունի Հայ Մշակոյթի տարեկան նուիրահաւարութեան յաջողութենէն:

Յօգուտ Հայ Լեզուին, Հայ Դպրոցին եւ Հայ Ուսանողին:

Վարիչ-Պատուիրակ

Գանձապահ

Նախագահ

Վ. ՄԱԼԷՋՅԱՆ

Լ. ԿԻԻՄԻՇԵԿԵՐՏԱՆ

ԶԱՐԵՀ ՆՈՒՊԱՐ

Բաւլա, 15 Նոյեմբեր 1937

ԼԱՐԻ Է ՊԱԼԱՏ ՄԸ ԿԵՐՏԵԼ ԼԱՐԱԳՈՅՆ Է ՄԱՆՈՒԿ ՄԸ ԿՐԹԵԼ